ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐՈՎԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Առարկա՝ Երաժշտություն

Ուսուցչուհի՝ Մեդա Ղազարյան

Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……3

ԳԼՈՒԽ I

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ …….....5

1.1 Երաժշտական դաստիարակությունը հին և միջնադարյան հայ դպրոցում …….....5

1.2.Երաժշտական կրթության և դաստիարակության վերելքը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին …….....13

1.3 Երաժշտական կրթությունը և դաստիարակության զարգացումը խորհրդահայ դպրոցում ……..18

ԳԼՈՒԽ II

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ……21

2.1 Երաժշտական դաստիարակությունը XXդ. վերջին և XXIդ. սկզբին……21

2.2 Բարեփոխումներ XXI դ. հայ դպրոցում՝ երաժշտական կրթության և դաստիարակության բնագավառում……..23

2.3 Հայ դպրոցի երաժշտական դաստիարակության լավագույն ավան-դույթների կիառումը ուսուցման գործընթացում……27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..32

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……35

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված,ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը,այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկը երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և նորովի կիրառել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ազգային արժեքների և մարդկային արժեքների ձևավորման խթանումը «Երաժշտություն» առարկայի դասավանդման ընթացքում: Հարկավոր ուսումնասիրել նախորդ սերունդների կողմից կատարված աշխատանքները և դրա հիման վրա ստեղծել մի համակարգ, որը թույլ կտա կրթել ու դաստիարակել ներկա սերունդներին: Ծանոթացնել երաժշտության պատմությանը՝ բացահայտելով նրա ազգայինը, որպես երեխաների դաստիարակության արդյունավետ միջոց: Ցույց տալ երաժշտության դեր, նրա գործունեության ձևավորման ընթացքը՝ երաժշտական դաստիարակությունը իրականացնելով ազգային և հոգևոր երաժշտության միջոցով: Խնդիրներն են՝

1. Խթանել ազգային երաժշտության արժեքների հետաքրքրվածություն,
2. Սերմանել սովորողների մեջ սեր դեպի ազգայինը,
3. Դիտարկել երաժշտությունը՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեք
4. Ուսումնասիրել «Երաժշտություն» առարկայի դերը և նշանակությունը երեխայի անձի ձևավորման գործընթացում

5. Բացահայտել տարբեր ժամանակաշրջանների նշանավոր մանկավարժ մտածողների հայացքներն ու ներդրումները երաժշտական դաստիարակության մեջ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ I

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1 Երաժշտական դաստիարակությունը հին և միջնադարյան հայ դպրոցում:

Հայ ժողովրդի դարավոր երաժշտական մշակույթը սկիզբ է առել դեռևս մ.թ.ից հազարամյակներ առաջ: Պատմական տվյալները մեզ են հասել հայ պատմիչներ Մ. Խորենացու և Փ. Բուզանդի աշխատությունների շնորհիվ: Պատմությունը ցույց է տվել, որ նախապատմական փուլում երաժշտության գրանցման որևէ ձև չի կիրառվել, և բավական բարդ կլինի ասել,թե նախկին սերունդները ինչպիսի երաժշտական դաստիարակություն են ստացել:

Պետականորեն ընդունելով քրիստոնեությունը որպես պաշտոնական կրոն, հիմք ստեղծվեց հայկական քրիստոնեական եկեղեցական երաժշտության զարգացման համար: Ագաթանգեղոսը հայտնում է, որ IV դարի վերջից բարձրագույն դպրոցներում երգեցողություն են ուսուցանել: Միևնույն ժամանակ հայտնի էր հայկական հոգևորականության բացասական վերաբերմունքը հեթանոսական երաժշտական ժառանգության հանդեպ: Վարդապետարաններում(հայկական դպրոցներում,որոնք ինչպես հայտնել է Մովսես Խորենացին, առաջին անգամ հիմնադրել է Մ. Մաշտոցը), ուսուցանվում էին երաժշտություն և երգ: եկեղեցական երաժշտության զարգացման ընթացքում ձևավորվել են շարականներ: Մ. Մաշտոցի շնորհիվ ընդլայնվում էր դպրոցական ցանցը: Եվ այն,որ նրա դռները բաց են եղել բոլոր խավերի համար՝ դպրոցում «իշխան ու ռամիկ» սովորել են միասին և, որ շատ կարևոր է անվճար ու ձրի:

Մաշտոցը բարձր գնահատելով դպրոցի, համընդհանուր լուսավորության դերը, իր քարոզներում հիմնավորում և եզրակացնում էր՝ ճանաչողությունը բնության և մարդու էության ըմբռնում է «ծանիր զքեզ», այն իրականացվում է ուսուցման, դաստիարակության և շրջապատի հետազոտման միջոցով, շնորհիվ բանականության, որը զգայարանների ուսուցիչն ու տիրակալն է և ուղղում է սխալը, լրացնում թերին,

հարստացնում ու համակարգում մեր գիտելիքները: Ապա կյանքում պետք է լինել գործունյա, պայքարել երջանկության, բարօրության համար,մարդու ապագան իր իսկ ձեռին է.մաքառիր ու ձգտիր միշտ ու ամենուր հետամտելով բարին, քանզի չարը մարդուն տանում է կործանման:

Գրերի գյուտից անմիջապես հետո, Ս. Պարթևի և Մ. Մաշտոցի, ինչպես և նրանց ավագ աշակերտների ջանքերով թարգմանվում են աստվածաշունչն ու պաշտամունքային այլ բնագրեր, առաջին հերթին՝ Պատարագամատույցը, ծեսն ու արարողությունը: Աստվածաշնչից անջատվելով առանձին գրքով լույս են տեսնում Դավթյան սաղմոսները, որով գոյանում է նախ՝ հայոց Սաղմոսարանը, ապա և վերջինիս վրա ավելացնելով մարգարեական օրհնություններն ու քարոզները, աղոթքները, հայոց հնագույն ժամագիրքը: Հենց այդ ժամանակ էլ բնականաբար անհրաժեշտ է դառնում ծեսի, արարողության, նաև երաժշտական կողմի բարեկարգման գործը: Այստեղ իրենց անգնահատելի նվիրումով առանձնացան Ս. Պարթևն ու Մ. Մաշտոցը՝ եկեղեցական երաժշտության հիմքում դնելով հայոց ավանդական ձայնեղանակները, հատկապես կարգավորելով և ուսուցանելով դրանք աշակերտներին: Մասնավորապես հին Հայաստանի երաժշտության տեսությանը նվիրված ուսումնասիրության մեջ Ն. Թահմիզյանը հնագույն ձեռագիր Ժամագիրք-Սաղմոսարանների համեմատական վերլուծության արդյունքում եկել է այն եզրակացության, որ V դ. ստեղծված այդ ծիսամատյանում առաջին անգամ համակարգվել են ութ ձայնեղանակները: Ի լրումն ձայնեղանակների կարգավորության մշակվում են՝ ձայնի և ներդաշնակության հենքի մասին ուսմունքները: Ազգային նոր դպրոցներում լայնորեն մեկնաբանվում են՝ տառի, վանկի, խոսքի ու նախադասության, ինչպես և կետադրության վերաբերող մի շարք դրույթներ, որոնք մեծապես նպաստում են՝ նաև երաժշտա-բանաստեղծական արվեստի և առհասարակ երգերում ու ասերգերում խոսքի, երաժշտության փոխկապակցվածությունը տեսականորեն իմաստավորելուն: Մ. Մաշտոցը կրթություն տալու համար հատկապես երգելու ընդունակ տղաներ հավաքելիս, ստուգում էր նաև նրանց երգեցողությունը: Ս. Պարթևի և Մ. Մաշտոցի կողմից ընտրված «փափկաձայն» տղաների մեջ էին՝ V դ. մեզ հայտնի պատմիչներ, թարգմանիչներ, իմաստասերներ և գրողներ: Ինչպես վկայում են պատմագրական ու ձեռագրական փաստերը, հայ իրականության մեջ հոգևոր ինքնուրույն երգերն այնքան էին բազմանում, որ անհրաժեշտ է

լինում հատուկ ընտրություն կատարելով ի մի բերել եկեղեցու կողմից պաշտոնապես ընդունված նմուշները: Գործը գլուխ է բերում Բարսեղ Ճոնը, կազմելով մի ժողովածու, որն և ապագա շարականոցի հիմքն է դառնում: Բարսեղ Ճոնը կազմում է հոգևոր ինքնուրուհն երգերի առաջին, պաշտոնապես վավերացված ժողովածուն, որը կոչվել է «Ճոնընտիր»: Քիչ ավելի ուշ, VIIդ. I-ին քառորդում, Ստեփանոս Սյունեցու ջանքերով սկզբունքորեն ընդունվում է եկեղեցական միևնույն տոնին վերաբերող 8-9 երգերից բաղկացած «կանոնի» արևելաքրիստոնեական ժանրը: Երաժշտական միջնադարագիտության տեսակետից՝ Ստեփանոս Սյունեցու վարքը հայ միջնադարյան մատենագրության այն հազվագյուտ նմուշներից է, որը բովանդակում է Սյունեցու՝ որպես երաժշտի մասին արժեքավոր տեղեկություններ: Սակայն դրանով նրա արժեքը չի սպառվում: Նա եղել է քրիստոնեական եկեղեցու գաղափարական ձգտումներն արտահայտողներից մեկը: Սյունիքում հիմնել է իր վարդապետարանը՝ բարձր տիպի դպրոցը: Զբաղվել է հայ աշխարհիկ ու հոգևոր երգի մշակման և ուսուցման գործով: Նա «հայ առաջին գիտնական երաժշտագետն է», որ կիրառել է հայկական երաժշտական նշանները, նոտաները, խազերը: Բաժանել է և որոշակիացնել «ութ ձայները», կարգավորել շարականները, ապա ըստ «յոթն եղանակի» հարմարեցնել սաղմոսները և այլն: Հարկ է նշել, որ նա ուշադրություն է դարձրել ժողովրդի լայն խավերի մեջ տարածված այլ ժանրերի և հատկապես այնպիսիների վրա, որոնք իրենցից կարող էին ժողովրդական ծավալուն վեպերի մաս կազմող երգեր ներկայացնել: Ս. Սյունեցին անցկացնելով զուգահեռներ գուսանական և հոգևոր երգերի միջև գտնում էր, որ գուսանների կողմից մշակված արտահայտության տարբեր ձևերն ու միջոցները պետք է օգտագործել նաև «աստուածային» հոգևոր երգերը կատարելիս: Հայտնի է, որ հոգևոր բազմաթիվ երգեր հորինողներից ու տարածողներից մեկն էր իր ժամանակի նշանավոր երաժիշտ, Ստեփանոս Սյունեցու քույր Սահակադուխտը, ում մոտ «…աշխարհիկ ու եկեղեցականք կու գային… աշակերտելու և սովորելու նոր եղանակներ»:

Սահակադուխտը նվիրվում է մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության շնորհակալ գործին: Իր տնային-մասնավոր երաժշտական դպրոցում, երբեմն առանձնանալով Գառնիի ձորակի այրերից մեկում, իր շուրջն էր հավաքում երկու սեռի երեխաների և ուսուցանում նրանց: Հաճախ վարագույրի հետևից, հետամնաց հոգևորականությանն իր դեմ չգրգռելու համար: Միաժամանակ հորինում էր բանա-

ստեղծություններ ու ձայնագրում դրանք, որի շնորհիվ նրա հռչակը տարածվում է շրջակա բնակավայրերում և նրա մոտ սովորող ցանկացողների թիվը բազմապատկվում է. Մոտակա բնակավայրերում նա բացում է իր դպրոցը և գեղջուկ տղա- աղջիկ խմբերով հավաքում իր մոտ, երգ ու երաժշտություն սովորեցնում նրանց: Ստ. Օրբելյանը գրել է Սյունյաց մետրապոլիտ Ստեփանոսի քրոջ Սահականդուխտի մասին, որը «շատ հմուտ էր երաժշտության արվեստին, որը և սովորեցնում էր շատերին… նաև ստեղծեց քաղցր եղանակ կցուրդներ ու մեղեդիներ»: Կանանց ու տղամարդկանց ուսուցման մասին է վկայում Եղիշեն, ըստ որի «ազատների և շինականների տղաներն ու աղջիկները պետք է կրթվեն նույն մոգերի հրահանգների հրահանգների»:

Վկայությունը կարևոր է նաև նրանով, որ հիշատակվում են առկա «հրահանգների» մասին, որպես ուսուցման ու կրթության միջոցների: Տարիքային տարբեր խմբերի ուսուցման մասին է վկայում պատմիչ Ղ. Փարպեցին, երբ հիշատակում է «մեծամեծների ու տղաների սաղմոսելու մասին ամենայն տեղ՝ հրապարակներում, փողոցներում և տներում»:

Զարգացող ժամանակաշրջանում բարձր տիպի դպրոցները նորություն էին հայ իրականությունում: Տարրական դպրոցները երկու կարգի էին՝ հասարակական և մասնավոր: Հասարակական էին այն դպրոցները, որոնք պահպանվում էին եկեղեցու և պետության միջոցներով: Մասնավոր դպրոցներում ուսուցանում էին եկեղեցական պարզունակ գիտելիքներ պատարագի, ժամասացության մասին: Աշակերտը, դպրոցն ավարտելով, կարող էր կարդալ Աստվածաշունչը, երգել շարականներ: Այս կարգի դպրոցները կազմակերպվում էին հոգևորականների կողմից: Տարրական երկու կարգի դպրոցներում ուսումը տևում էր երեք-չորս տարի, սովորում էին 12-13 տարեկան հասակի երեխաներըչունեին: Բարձրագույն դպրոցները կամ ուսումնական հաստատությունները՝ վարդապետարանները, հայ դպրության նշանավոր կենտրոններ էին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վանքերը երկու բնույթի գործառնություն էին իրականացնում: Դրանց մի մասը զբաղվում էր զուտ կրոնական գործառնությամբ՝ քարոզով, բարեգործությամբ, հիվանդների, ծերերի խնամքով և այլն, իսկ մյուս մասի համար հիմնական տեղ էր զբաղեցնում գիտակրթական գործունեությունը: Այդպիսի վանքերում կային վարդապետարաններ, որոնք բարձրագույն դպրոցներ էին՝ ուսուց-

ման որոշակի մշակված ծրագրերով: Այստեղ է, որ զարգացում է ապրում հայ երաժշտական մշակույթը: Հայ հոգևոր երգարվեստը հասնում է վիթխարի նվաճումների:

Առաջին մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին հանճարեղ կերպով ընդհանրացնում է նախորդ դարերի ազգային հոգևոր քնարերգության լավագույն նվաճումները: Նարեկացին խորագիտորեն բացահայտում է կրթության համակարգված ուսուցման գերկարևորությունը այն հարակցելով ինքնակրթությանը դրանք համարելով կյանքի հետ համաքայլ ընթանալու, հետ չմնալու միջոց. Դրա համար էլ հարատևորեն պետք է սովորել… թեպետև մարդն ի վիճակի չէ սպառելու գիտությունը «Միշտ ուսանիմ,և երբեք ի գիտութիվն ճշմարտության ոչ հասանիմ», բայց չզլանալ, քանզի կրթությունը մտքին թռիչք է տալիս և մերձեցնում իսկությանը: Ըստ Նարեկացու մարդու միտքը հիմնականում պետք է գործի և նպաստի հոգու զարգացմանը, ձգտի նմանվել Աստծուն, այս դեպքում Քրիստոսին: Նարեկացու վեհ հայացքները վերափոխող բարերար ազդեցություն են գործել հայ դպրոցի, մանկավարժական մտքի ճիշտ կողմնորոշման վրա: Նրա ստեղծագործական ժառանգությունը խոր ազդեցություն է թողել հայ ժողովրդի հոգևոր զարգացման վրա: Այսօր էլ գրական անանց արժեք ներկայացնող նրա գործերը, և մանավանդ «Մատյան ողբերգության» երկն ավելի ու ավելի լայն մասսայականություն են վայելում ու ներգրավված են երիտասարդության գաղափարական և բարոյա-գեղագիտական դաստիարակության ոլորտում:

Նարեկացու ստեղծագործությունների մեջ առանձին տեղ են զբաղեցնում գանձերը՝ գրված որոշակի տոնին երգվելու նպատակով: Պահպանվել են շուրջ տաս գանձեր, որտեղ գովաբանվում է տոնի խորհուրդը: Գանձերը սերում են ավանդական քարոզից և ունեն քարոզին բնորոշ ձևական հատկանիշներ: Նարեկացուց պահպանվել են նաև շուրջ երկու տասնյակ տաղեր, որոնք իրենց բովանդակությամբ կապվում են գանձերի հետ, քանի որ նվիրված են եկեղեցական որոշ տոների: Նարեկացին տաղերում արտահայտել է կրոնական տրամադրություններ և գաղափարներ՝ իրականությունից առնված պատկերներով: Ճիշտ է տաղերում մարդու ներաշխարհի, նրա խոհերի ու ապրումների պատկերները դեռ այնքան խորը չեն, բայց «Մատյան ողբերգության» մեջ դրանք հասնում են գերօրինակ ուժի ու բարձրության: Գեղեցկության իդեալը սովորաբար մարմնավորում է տիրամայրը: Դրա ամենավառ արտահայտություններից է «Տաղ վարդավառին», որը հեղինակի լավագույն ստեղծագործություններից է: Վարդի

և շուշանի գույնզգույն ծաղիկների պատկերներով հեղինակը նկարագրում է Քրիստոսի պայծառակերպության ավետարանական դրվագը։

Հայ մանկավարժները միշտ էլ ուշադրության կենտրոնում են պահել երեխաների կրթության ու դաստիարակության գործը և փորձել են այն իրականացնել հանելուկների, չափածո երկերի, մանրապատում ստեղծագործությունների միջոցով։

Այժմյան համակարգում Նարեկացու ստեղծագործությունները ուսումնասիրվում են և՛ հիմնական և՛ ավագ դպրոցներում։ Միայն այն տարբերությամբ, որ ստեղծագործությունների ուսումնասիրությունը կատարվում է առավել խորքային, քանի որ տաղերին ավելանում է մեծ քնարերգուի հանճարեղ «Մատյան ողբերգության» պոեմը։ Դպրոցական ծրագրում ուսումնասիրել Նարեկացու ստեղծագործությունները և հատկապես նշանավոր պոեմը բավականին բարդ է։ Այն բացի գրական գիտելիքներից, ձևավորում է սովորողի արժեհամակարգի, բարոյական կերպարի, մասնավորաբար հոգևոր ընկալումների ձևավորում և զարգացում։

Հայ միջնադարը բնորոշվում է գիտության և մշակույթի աշխարհականացման շարժմամբ, որի առաջամարտիկը Ներսես Շնորհալին է, ում հավաստմամբ՝ հայ եկեղեցին կարևոր դեր էր խաղում ժողովրդի կյանքում՝ դառնալով ազգապահպանման ու ազգահամախմբման կարևոր գործոն։ Ահա թե ինչու հենց նրա հոգևոր գործունեությունը կրթական և դաստիարակչական կարևորագույն խթան հանդիսացավ դպրոցական գործի կազմակերպման գործընթացում։ Նրա խրատական-ուսուցողական երկերը, պոեմները, հանելուկները բեկում առաջացրին հայ գրականության ու արվեստի զարգացման բնագավառում, բնականաբար նաև հայ դպրոցի պատմության ակունքներում։

Շնորհալին ոչ միայն երգահան է եղել, այլև երաժիշտ, այն է երգիչ, ուսուցիչ, տեսաբան, գեղագետ և մեծ բարենորոգիչ։ Որպես երգիչ, նա ինքն է եղել առնվազն իր բազմապիսի ստեղծագործությունների առաջին կատարողը։ Ըստ բոլոր տվյալների , Շնորհալին զբաղվել է հայոց ձայնեղանակների ու խաղերի համակարգի հարցերով։ Չափազանց հարուստ, բազմաժանր ու բազմաբովանդակ գրական ժառանգությունը, որը մեզ է հասել գրեթե անկորուստ։ Գրել է արձակ (ճառեր, թղթեր, մեկնություններ) և առավելապես չափածո (տաղեր, բանքեր, շարականներ, հանելուկներ, պոեմներ և այլն) երկեր։

Նա համարվում է ամենամեծ շարականագիրը։ Հայրենասիրության ու մարդկային վեհագույն գծերի գովք են Շնորհալու շարականներից շատերը։ Նրա գեղագիտական դաստիարակության լավագույն գործոն է, դրանք խոսում են մարդու զգացական աշխարհի հետ, քանի որ ժողովրդական և եկեղեցական երաժշտությունը կապված են իրար, իսկ եկեղեցական երաժշտության հիմքը ազգային ժողովրդականն է։ Հենց այն հանգամանքը, որ չկա հայկական կրոնական որևէ ծես, որտեղ չկատարվեն նրա երգերը։ Շնորհալուց պահպանվել են մանկավարժական-ուսուցողական բնույթի բանաստեղծություններ, որոնք չունեին իրենց նախօրինակը իրենց հայ գրականության մեջ։ Նա խորացրել է հոգևոր երգերի ազգային բովանդակությունն ու հայրենասիրական ոգին, կատարելագործել եղանակները։ Նրա ամենասիրված ու տարածված հոգևոր երգերից է «Առավոտ լուսո»-ն, որի եռատոն տներն սկսվում են հայոց այբուբենի հաջորդական տառերով։ Նա նաև մեր առաջին մանկագիրն է, մանկավարժական-ուսուցողական բանաստեղծության հիմնադիրը։ Գրել է չափածո խրատների 2 շարք՝ անձնավորելով հայոց այբուբենի տառերը,ինչպես նաև 300-ից ավելի չափածո հանելուկառակներ։

Քննարկվող ժամանակահատվածում Հայաստանում մեծապես զարգանում էին վանքերին կից բարձրագույն տիպի դպրոցները, ինչպես՝ Սանահինի, Տաթևի, Նարեկավանքի և Անիի դպրոցները,որոնցում երգ-երաժշտության ուսուցումը նորոգելու ուղղությամբ լուրջ ճիգեր գործադրեցին բազմահմուտ ուսուցչապետերը։ XI դ. Վերջերին և XII-ի սկզբներին Անիի բարձրագույն դպրոցը գլխավորում էր Հովհաննես Սարկավագ վարդապետը, նա երաժիշտ էր։ Հ. Սարկավագը բազմակողմանի հիմնավորեց փորձի մեթոդի անհրաժեշտությունն ու կարևորությունը թե հետազոտական աշխատանքներում, թե ուսուցման գործում։ Դասի պրոցեսը տևում էր երկար, այն կանոնակարգված չէր։ Դասի կառուցվածքը բաժանված էր հին դասի հարցումից և նոր դասի հաղորդումից՝ «զնոր դասս անել աշակերտաց»։ Ուսուցումը կազմակերպվել է և խմբովին և անհատապես, օգտագործել են դասագրքեր, պնակիտ՝ որպես գրելու, գծագրելու միջոց։ Տարածված մեթոդներից են եղել մեծ ու փոքր խմբերի համար թելադրությունները, կրկնությունները, աշակերտների աշխատանքների ստուգումները, խրախուսանքի, հարկադրության, ճիշտ գնահատման և այլն։

Կրթական հաստատությունները ըստ տեսակի եղել են՝ վանական, եկեղեցիական, հասարակական, պետական, տնային կամ մասնավոր և այլն: Ժամանակի պահանջների և երկրի քաղաքական որոշ ժամանակների ծանր կացության հետևանքով դպրոցների մեծ մասը կենտրոնանում է վանքերում: Կրթության լուսավորության տարածման գործում նշանակալի էին էջմիածնի, Տաթևի, Գլաձորի, հաղպատի, Սանահինի,Կապոսի, Անիի, Գետիկի, Այրիվանքի, Կարսի, Վարագա, Նարեկա, Աղթամարի, Մուշի, Կարինի և այլ դպրոցների գործունեությունը: Դպրոցների ուսուցիչները կոչվել են՝ դասատու, դասապետ, վարդապետ, դպրապետ, րաբուն, րաբունապետ: Դպրոցական ուսման տևողությունը (վերաբերվում է նաև նախորդ և հետագա ժամանակներին) եղել է տարրական 2-5, միջին 8-10, բարձրագույն 4-7 տարի: Դպրոցական տարիք համարվել է 6-9-ից մինչև 17-20 տարեկանը: Դրան հաջորդել են բարձրագույն ուսումնառության տարիները: Տարբեր էր կրթության բովանդակությունը: Դաստիարակության մեթոդներն էին՝ անձնական օրինակ, բարոյախոսական զրույց, խրատ, խրախուսանք, պարսավանք պատիժ, համոզում և այլ ձևեր: Միջնադարյան Հայաստանում, առհասարակ, կրթական բարձրագույն հաստատություններում երաժշտության ուսուցումը մշտապես եղել է հատուկ ուշադրության առարկա. Օրինակ՝ Գլաձորի համալսարանում (1282-1338թթ.)՝ Եսայի Նշեցու օրոք, որտեղ երեք լսարաններից մեկը մասնագիտացված էր խազագիտության և երաժշտության մեջ: Այստեղ մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման մեթոդներին: Նշեցին նշում էր, որ ուսուցիչ-դաստիարակը պետք է լինի կրթված ու դաստիարակված, հոգատար ու սիրալիր, անընդհատ հարստացնի-թարմացնի իր գիտելիքները, կատարելագործվի մեթոդապես, հանդես գա ոչ որպես սոսկ կրկնող, այլ մշակող,վերլուծող ու պարզաբանող:

Նույն Սյունիքում ստեղծվեց և ծաղկում ապրեց Տաթևի համալսարանը, հայ դպրության և մշակույթի այդ փառավոր օջախի հիմնադիրը հանդիսացավ տաղանդավոր գիտնական՝ Հովնան Որոտնեցին, իսկ նրա գործը շարունակեց Գրիգոր Տաթևացին: Այս ժամանակահատվածում անդրադարձ կատարվեց մի շարք երաժշտատեսական և ծիսակարգային հարցերի քննությանը, հայտնի է եկեղեցական եղանակների մասին ուսումնասիրություններ ըստ Որոտնեցու, Տաթևացու: XVIդ, վերջին XVIIդ. սկզբին ավերների և կողոպուտների հետևանքով եկեղեցիները զրկվել էին և արտաքին, և ներքին հարդարումից, դադարել էր պաշտոներգությունը, լռել էին

եկեղեցու զանգերը, չէր հնչում հոգևոր երգը: Այս ամենն պետք ուներ բարեկարգման, որի գլուխ կանգնում է Մովսես կաթողիկոս Տաթևացին: Նրա ջանքերով նորոգվում են Մայր Աթոռի վանական շինությունները, ըստ պատշաճի վերականգնվում Տերունական և Սրբոց տոնակատարություններն ու օրվա ժամերգությունները: Նա վերականգնում է Գիշերային, Առավոտյան և Արևագալի ճաշու ժամերի երգեցողություններն ամենայն մանրամասնությամբ, հրահանգում վերահաստատել նաև Ստեփանոս Սյունեցու Հարության օրհնությունները: Այս բարենորոգումների շնորհիվ հավատավոր ժողովուրդը վերադառնում է Աստծո տուն, եկեղեցին լցվում է խնկաբույր բուրվառներով և առ Աստված ուղղված հոգեթով աղոթքներով երգեցողությամբ:

Երաժշտության և պոեզիայի ոլորտում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Սայաթ-Նովան (1712-1795թթ.), ով ստեղծագործել է հայերեն, վրացերեն և թուրքերեն, կատարյալ կերպով տիրապետել է գուսանական արվեստի նրբություններին: Նրա ստեղծագործության անկյունաքարը սոցիալական և սիրային քնարերգությունն է, որը ուղենշային դեր խաղաց հայկական գուսանական արվեստի հետագա զարգացման մեջ: Նրա խազերը մեծ մասով հորինվել են որոշակի եղանակներով հանդերձ: Սայաթ-Նովայի երգերի եղանակները մեծ մասամբ ակնառու վարպետության արգասիք են: Նրա արվեստը մեծ դեր է կատարել Անդրկովկասի աշուղության զարգացման գործում: Սովետական Հայաստանում Սայաթ- Նովայի անունով են կոչել դպրոցներ, փողոցներ, գուսանական երաժշտական խմբեր: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի մի շարք լեզուներով:

1.2.Երաժշտական կրթության և դաստիարակության վերելքը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին

Այս ժամանակահատվածում կարևոր կրթօջախներից էր Աղաբաբյան դպրոցը, որը բացվել էր 1810թ.: Տեղի հայ վաճառական Նիկողայոս Աղաբաբյանի և եղբայրների միջոցով: Հիմնելով Ռուսաստանում առաջին հայկական աշխարհիկ դպրոցը՝ հիմնադիրը նպատակ է ունեցել ստեղծել մի ուսումնական հաստատություն, որը կյանքի համար պիտանի գիտելիքներ. հմտություններ կտա աշակերտներին:

Սովորողները հատկապես հայ երեխաներ էին, բայց դասավանդումը կատարվում էր հիմնականում ռուսերեն: Այստեղ հայոց եկեղեցիներին կից գործել են հայկա-

կան երգչախմբեր: Իր մեծ ներդրումն ուներ Ներսիսյան վարժարանը, որ բացվել էր 140 աշակերտով: Հինգերորդ տարում աշակերտների թիվը հասավ 400-ի: Դպրոցի առաջին: Ճեմարանի մանկավարժների գլխավոր նպատակը ոչ միայն լավ աշակերտներ այլ նաև իսկական անհատականություններ դաստիարակելն էր: Ճեմարանում երաժշտություն և երգեցողություն ուսանել է հայտնի կոմպոզիտոր Մակար Եկմալյանը: Ավելին նա ճեմարանում ստեղծել է տղամարդկանց բարձրակարգ երգչախումբ: Եկմալյանի ստեղծագործությունների մեջ առանձնանում է իր քնարավիպական կառուցվածքով «Պատարագը», որը գրված է երգչախմբի համար՝ առանց նվագակցության:

Հայկական խազագիր նոտագրությունը հետզհետե բարդանում էր, և անհասկանալի էր դառնում եկեղեցական երաժիշտներին: Ոմանք առաջարկում էին ընդունել եվրոպական նոտագրության սիստեմը և անմիջապես անցնել հոգևոր երգերի ձայնագրությանը՝ դրանք հետագա աղավաղումներից ու կորստից փրկելու նպատակով, ոմանք գտնում էին,որ ավելի լավ է ընդունել հունական նոտագրությունը, իսկ շատերն էլ պահանջում էին ստեղծել հայկական երաժշտության առանձնահատկություններին համապատասխանող ձայնագրությունների հարազատությունը: 19-րդ դարի սկզբին հին հայկական ձայնագրության՝ խազերի հիման վրա 1813-1815թթ. Համբարձում Լիմոնճյանը ստեղծում է հայկական նոր նոտագրության համակարգ: Լիմոնճյանը գալիս է այն համոզման, որ տիրացուների անճաշակ կատարումներով ազգային հոգևոր երգը և հատկապես ծանր եղանակները, ենթարկվում են աղավաղումների ու շրջապատի օտար ազդեցությունների, ինչից և անհրաժեշտ էր խուսափել: Նա ստեղծված իրադրությունից դուրս գալու ելք գտնում է, որ կորսված խազերի փոխարեն պետք է ստեղծել հայկական նոտագրության նոր համակարգ: Նրա կողմից ստեղծված համակարգն ուներ 7 հնչյուն և զուրկ էր հնգագծից: Դրանցով, ու մի քանի օժանդակ նշաններով, պարզ և կատարելապես նշանակվում են հնչյունի բարձրությունն ու տևողությունը, դրանց իջեցումներն ու բարձրացումները (ալտերացիա) երաժշտական զարդարանքները: Այսպիսով՝ հիմք դրվեց հայկական նոր ձայնագրությանը, որը հետագայում շարունակեցին նրա աշակերտները՝ Հովհաննես Մյուհենտիսյանը և այլք: Այդ ժամանակ գրառվել են ինչպես ժողովրդական երաժշտության նմուշներ, այնպես էլ

հոգևոր՝ մասնավորապես Նիկողայոս Թաշչյանի կողմից գրված հին հայկական հոգևոր երաժշտական ստեղծագործությունների 3 հատորները:

Առաջընթաց ունեցավ երաժշտական արվեստը: Դեմոկրատական աշխարհայացքի տեր հայրենանվեր երաժշտագետները ստեղծեցին երգերի ժողովածուներ, կազմեցին երգչախմբեր, սկսեցին գրի առնել և մշակել ժողովրդական երգերը: Հիմք դրվեց հայ նոր երաժշտական արվեստին, որի զարգացման գործում մեծ դերակատարում ունեցավ անվանի արևմտահայ կոմպոզիտոր՝ Տիգրան Չուխաճյանը: Լինելով մեծապես օժտված երգահան Տ. Չուխաճյանը շրջում էր քաղաքի փողոցներով, լսելով և նշելով մեղեդիների հատվածներ, նպատակ ունենալով ռիթմիկ մոտիվները օգտագործել իր ստեղծագործություններում: Նա լուծեց իր ժամանակի մշակութային կարևորագույն խնդիրներից մեկը՝ ստեղծեց ազգային օպերան, ինչպես նաև մեծ դեր խաղաց հայ ազգային երաժշտության դպրոցի հիմնադրման գործում: Նրա օպերային ստեղծագործությունները կարևոր դեր խաղացին ողջ արևելքի և հայ դասական երաժշտության զարգացման մեջ: Տաղանդավոր կոմպոզիտորը 1868թ. Գրեց «Արշակ Երկրորդ» օպերան և դրանով հիմք դրեց հայկական օպերային արվեստին: Տ. Չուխաճյանի կողմից ստեղծվել են նաև օպերետներ, որոնցից առանձնապես հայտնի է «Լեբլեբիջին»:

19-րդ դարի երկրորդ կեսի հայ երաժշտության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Քրիստափոր Կարա-Մուրզան: Նա հանդիսացավ ամենաաչքի ընկնող երաժշտական-հասարակական գործիչներից մեկը, ով իր երաժշտական գործունեությամբ անգնահատելի ծառայություն մատուցեց մեր ժողովրդին: Նա առաջինն էր հայ կոմպոզիտորներից, որ իր ուշադրության կենտրոնում դրեց հայկական ժողովրդական երգերի հավաքման, ձայնագրման, քառաձայն մշակման և տարածման գործը: Իր ստեղծագործական աշխատանքի արդյունքում քառաձայն երգեցողությունը դարձավ անհրաժեշտություն հայ ունկնդիր հասարակության համար: Կարա Մուրզան Հարավային Կովկասի տարբեր ծայրերում և Ռուսաստանի հարավում ստեղծեց ավելի քան 90 հայկական ժողովրդական երգչախմբեր: Ստեղծագործական և խմբավարական-մանկավարժական գործունեությամբ հանդես եկավ երգահան Մակար Եկմալյանը, ով հայ եկեղեցուն և ժողովրդին մատուցած իր ծառայություններով վաստակեց հայկական երաժշտության կարկառուն ներկայացուցիչներից մեկը լինելու համբավը:

Եկմալյանը 1891-ից մինչև 1902 թ. աշխատեց Ներսիսյան հոգևոր դպրոցում: Նրա մշակած պատարագը ևս բազմաձայնված է եվրոպական երաժշտության հարմոնիայի սկզբունքներով և միայն կոմիտասի անձնվեր աշխատանքի շնորհիվ XXդ. I կեսում մենք ունեցանք հայ հոգևոր երաժշտության սկզբունքներով բազմաձայնված պատարագ: Այս իմաստով Կարա-Մուրզայի «Պատարագի» պատմական նշանակությունը շատ մեծ է, քանզի նա առաջ բերեց պատարագի երգեցողությունները բազմաձայնելու անհրաժեշտությունը, որն իր զարգացումը գտավ Եկմալյանի և Կոմիտասի ստեղծագործության մեջ: Կոմիտասը անցյալ դարի վերջին և մեր դարի սկզբի հայ իրականության համար հանդիսացավ ազգային երաժշտության յուրահատուկ հանրագիտարան: Նա հայ գեղջուկի ստեղծագործությունը բնորոշեց որպես հոգևոր հարստության անսպառ աղբյուր, ազգային մշակույթի զարգացման հիմք: Կոմիտասը հայտնաբերելով ժողովրդական ստեղծագործության մեջ այնպիսի սկզբունքներ, որոնք սինթեզվելով համընդհանուր երաժշտության ավանդույթներին ստեղծեցին հայ դասական երաժշտության հիմքը: Վարդապետը դասավանդել է Գևորգյան ճեմարանում, ապա նաև մասնավոր դասեր վարել Կ. Պոլսում: Հավաքել և գրառել է ավելի քան 3000 հայկական ժողովրդական երաժշտության նմուշներ, որոնցից ավելի քան կեսը հետագայում կորել է և միայն մոտ 1200-ն է պահպանվել: Հայ երիտասարդությունը տեղյակ չէր հայ՝ ինքնուրույն երաժշտության գոյության մասին: Եվ ահավասիկ Կոմիտասն իր հրատարակություններով, կազմած երգեցիկ խմբերով, տարբեր քաղաքներում տված համերգներով ու բանախոսություններով ջնջեց հայ ժողովրդի անտարբերությունն ու անգիտությունը սեփական երգի հանդեպ: Նա մեծ ավանդ ունի հայ հոգևոր երգերի՝ ձայնագրության ասպարեզում, տաղեր, մեղեդիներ և ալելուիաներ, ձայնագրության ասպարեզում: Հիշատակելի են «Տիրամայրը», «Աչքն ծով», «Հավիկ» և այլ չքնաղ տաղեր, որոնց կատարմամբ Կոմիտասը փայլել է Միջազգային երաժշտական ընկերության կոնգրեսում և համերգներում: Իր ստեղծագործության մեջ հասավ պոլիֆոնիկ արվեստի բարձունքներին՝ կերտելով ոչ միայն քառաձայն, այլև վեց և ութ ձայնից բաղկացած խմբերգային պարտիտուրաներ: Կոմիտասի մենակատարները ու խմբերգերը աչքի են ընկնում ոճական ավարտվածությամբ ու մաքրությամբ, գեղարվեստական կերպարի լիակատար բացահայտմամբ, ձևի ու բովանդակության կատարյալ ներդաշնակությամբ: Կոմիտասը ոչ միայն գրի առավ հազարավոր ժողովրդական երգեր, այլև

մշակեց, մաքրեց օտարամուտ տարրերից և վերստին վերադարձրեց ժողովրդին որպես երաժշտական գոհարներ: Դրանցից են «Կալի երգը», «Հոլ արա եզո», «Գարուն ա», «Կռունկ» և այլ շատ երգեր: Նա համերգներով ու դասախոսություններով հանդես գալով Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի և այլ երկրների տարբեր քաղաքներում, ներկայացրեց հայ երաժշտական արվեստը, ապացուցեց նրա ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը:

Հայ երաժշտական ֆոլկլորագիտության կայացման շրջանն էր, որի առաջնային փուլը ժողովրդական երգի գրառումն էր: Ազգային երգի ձայնագրման և պահպանման գործընթացում մեծ հետքը թողեցին Քրիստափոր Կարա-Մուրզան, Նիկողայոս Տիգրանյանը, Մակար Եկմալյանը, Արշակ Բրուտյանը, Ստեփան Դեմուրյանը, ինչպես նաև Սահակ վրդ. Ամատունին՝ հայ երաժշտական բանահավաքչության ակունքներում կանգնած երախտավորը: Նա առաջիններից էր, ով գրառեց հայ գեղջուկի երգը և կազմեց ժողվրդական երգերի «Ձայնագրյալ ժողովածուն»-ն:

Արևելահայ կրթական մշակույթը, մանկավարժությունն ու դպրոցը, գիտությունն ու հասարակական քաղաքական կյանքը, ազատագրական պայքարը, եկեղեցին ու հոգևոր կյանքը մեծապես պայմանավորված էր հայ դպրոցի և մշակույթի պատմության մեջ: 1874թ. Էջմիածնի վանքին կից, ընդարձակ հողի վրա, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն իր ձեռքով հիմնեց մի դպրոց, որն իր անունով կոչվեց Գևորգյան ճեմարան: Իր ժամանակի համար փառավոր էր ճեմարանի շենքը, որի համար կաթողիկողը ոչինչ չխնայեց ¥ մատենադարանն հարուստ էր ավելի քան 40 հազար գրքերով ու պարբերականներով): Հոգևոր ճեմարանը թողեց իր գործունեության հետքերը գրեթե բոլոր բնագավառներում՝ բարձրացնելով հայ ժողովրդի մտավոր մակարդակը բարձրագույն եվրոպական չափանիշների: Բացվեցին նաև օրիորդաց վարժարաններ, սակայն սրան զուգահեռ ցարական կառավարությունը սահմանափակում էր հայկական դպրոցների թիվը և ամեն կերպ ջանում զրոյացնել դրանց դերը: 1874թթ. հմնվում է Նիկողայոս Թաշճյանի դպրոցը, որտեղ մասնակիցները ստանում էին երաժիշտ մանկավարժի վկայական՝ տիրապետելով Լիմոնճյանի հայկական ձայնագրության համակարգին: Հրատարակվում է առաջին երաժշտական դասագիրքը- ձեռնարկը, «Դասաքիրք եկեղեցական դաստիարակության հայոց», որը հնարավորություն տվեց կարճ ժամանակահատվածում յուրացնելու հայկական ձայնագրության բարդ համա-

կարգը: Հայ երաժշտաարվեստի զարգացման գործում մեծ եղավ նաև Ալ. Սպենդիարյանի, Ա. Տիգրանյանի թողած հարուստ երաժշտական ժառանգությունը: Սպենդիարյանը մեծ դեր խաղաց ազգային կոմպոզիտորական դպրոցի, նրա գեղագիտական սկզբունքների և հայ երաժշտության մեջ ռեալիստական ուղղվածության ձևավորման գործում: Նրա ժառանգությունը ամփոփում է տարբեր ժանրեր. Օպերային, սիմֆոնիկ, վոկալ, կամերա-գործիքային, խմբերգային:

Նախասովետական շրջանի հայ անվանի կոմպոզիտորների շարքում իր պատվավոր տեղն ունի Ա. Տիգրանյան, որի անվան հետ է կապված հայ ազգային օպերայի, վոկալ և գործիքային երաժշտական ստեղծագործության հարստացումն այնպիսի ստեղծագործություններով, որոնք առանձնակի տեղ են գրավում հայ դասական երաժշտական գանձարանում, նրա երգերն ու ռոմանսները ոչ միայն հնչում էին հայրենի քաղաքում, այլև Կարսում և շրջակա քաղաքներում, իսկ առաջին անգամ Ալեքսանդրապոլում բեմադրվեց «Անուշ» օպերան սիրողական խմբերի ուժերով:

1.3 Երաժշտական կրթությունը և դաստիարակության զարգացումը խորհրդահայ դպրոցում

Խորհրդային ժամանակաշրջանում հայ երաժշտական արվեստը զարգանում էր XX դարասկզբին ստեղծված ամուր հիմքի վրա: Այդ շրջանի ամենամեծ ձեռքբերումը հայ ազգային դասական երաժշտության և ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադրումն էր: ՀԽՍՀ լուսժողկոմի հրավերով երևան են գալիս Ռոմանոս Մելիքյանը և երգչուհի Արուս Բաբալյանը, Մելիքյանը ստանձնում է Երևանի երաժշտական ստուդիայի դիրեկտորի պաշտոնը: 1908թ. կազմակերպվում է «Երաժշտական լիգա» ընկերությունը, որի գլխավոր նպատակն էր կարգավորել երաժշտության դասավանդումը դպրոցներում, ստեղծել ու մասսայականացնել մանկական նորանոր երգեր, կազմակերպել հայ երաժշտության պրոպագանդայի գործը: Հրատարակվում են ձեռնարկներ, մանկական երգերի ժողովածուներ, որոնցից առավել հայտնի դարձավ «Զմրուխտ»-ի երգի ռոմանսների շարքը, որը ուղենշային դեր ունեցավ հետագայի կոմպոզիտորների համար: 1923թ. հիմնադրվեց հանրապետության երկրորդ բուհը՝ Երևանի կոնսերվատորիան: Այդ գործում մեծ դեր խաղաց նշանավոր մանկավարժ, կոմպոզիտոր Ռ. Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը: Կոնսերվատորիայի ազգային դիրքորոշումը հիմնականում պայմանավորվեց հայ երաժշտության պատմությանը, հայ ժողովր-

դական ստեղծագործությանը, հայկական երաժշտության լադային համակարգին վերաբերող դասընթացների իրագործումով: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ իրականության մեջ գործում էր երեք տեսակի դպրոցներ՝ պետական, ծխական-եկեղեցական և մասնավոր: Գոյություն չուներ դպրոցական-կրթական մեկ ընդհանուր միասնական համակարգ: Շատ գյուղերում դպրոցներ չկային և մեծ թվով երեխաներ զրկված էին նույնիսկ տարրական կրթություն ստանալու հնարավորությունից: Բացակայում էին բարձրագույն դպրոցները: Ուսուցիչների մեծ մասն ուներ միջնակարգ և տարրական կրթություն, այս ամենը ստիպում էր հայ երիտասարդությանը մեկնել Պետերբուրգի, Մոսկվայի, Բեռլինի, Լայպցիգի, Փարիզի, Ժնևի, Դորպատի և այլ քաղաքներ՝ համալսարան կրթություն ստանալու: Եվ այնուամենայնիվ, բոլոր ժամանակներում հայ մտավորականության և ընդհանրապես հայության երազանքն է եղել մայրենի հողի վրա ունենալ ազգային կրթական համակարգ:

Խորհրդային տարիներում Հայաստանի գրեթե բոլոր գավառներում տեղի ունեցան ուսուցչական հանրագումարներ, որի արդյունքում լուսժողկոմատը որոշում ընդունեց Հայաստանում ստեղծել երկու հիմնական տիպի դպրոց՝ տարրական և յոթնամյա: Որի շնորհիվ Հայաստանում դպրոցների թիվը հասավ 506-ի՝ 47,7 հազար աշակերտներով: Տարբեր ժամանակներում մանկավարժական տեխնիկումներ բացվեցին Երևանում, Ստեփանավանում, Գորիսում, Դիլիջանում, Նոր Բայազետում: Հիմնական նպատակը անգրագիտության վերացումն էր՝ առաջի հերթին 16-35 տարեկան բանվորների և գյուղացիների շրջանում: Համազգային ջանքերով հանրապետության բնակչության անգրագիտության վերացման խնդիրը հիմնականում լուծվեց: Գրագետ էր դարձել նրա մոտ 84 %-ը, դա մեծ նվաճում էր: Դպրոցներն անջատվեցին եկեղեցուց , իսկ մասնավորները փակվեցին: Խորհրդային Հայաստանի մշակույթի և գիտության զարգացմանը ներքաշվեցին բազում գործիչներ, որոնք նախկինում կրողն էին այլ քաղաքական հայացքների: 20-րդ դարի դասական երաժշտության ամենանշանավոր կոմպոզիտորներից մեկը համարվում է Արամ Խաչատրյանը՝ հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, նրա ստեղծագործությունները համալրեցին հայկական և համաշխարհային ֆոնդը՝ նոր հնչեղություն ու որակ հաղորդելով նրան: Ա. Խաչատրյանն իր ստեղծագործություններում օգտագործել է հայկական և կովկասյան, Արևելյան և Արևմտյան Եվրոպայի, Միջին Արևելքի ժողովուրդների ազգային երաժշ-

տությունը: Հայտնի են կոմպոզիտորի սիմֆոնիաները,կոնցերտները, «Սպարտակ», «Գայանե» բալետները, կինոնկարների համար գրված «Պեպո», «Զանգեզուր» երաժշտությունները: 1950-1960 ական թթ. Հրատարակվում են Մարտիրոս Մազմանյանի խմբավարական արվեստ և երաժշտական դաստիարակության մեթոդական ձեռնարկները, որոնք լայնորեն կիրառվում են երաժշտության ուսուցիչների վերապատրաստման և պատրաստման դասընթացում: 1970-ական թ. Երևանում պրոֆ. Յուզբաշյանի գլխավորությամբ ստեղծվեց երաժշտության դաստիարակության էքսպերիմենտալ լաբորատորիան, որի կազմում ընդգրկվեցին հանրապետության լավագույն երաժիշտ-մանկավարժները, կոմպոզիտորները, հոգեբանները և հանրակրթական դպրոցի ուսուցիչները: Լաբորատորիայի արդյունքը այն էր որ տեղայնացվեց ռուս անվանի կոմպոզիտոր մանկավարժ Կաբալևսկու երաժշտական ծրագիրը, այն նպաստեց երաժշտական կրթության և դաստիարակության առաջընթացին և որակի բարելավմանը: 1992թ. Պրոֆ. Յուզբաշյանը ստեղծեց երաժշտության ծրագիր հանրակրթական դպրոցի տարրական դասարանների համար, որում պահպանվել էին խորհրդային շրջանում ստեղծված երաժշտության ծրագրի լավագույն բաժինները: Այն կազմելիս հաշվի է առնվել բազմադարյան հայ դպրոցի ձեռքբերումները , առաջավոր փորձը: Վերջին տարիներին կազմվել են մանկական և ժողովրդական երգերի երգարաններ, հրատարակվել են հայ կոմպոզիտորների կողմից գրված երաժշտական ստեղծագործություններ:

ԳԼՈՒԽ II.
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ:

2.1 Երաժշտական դաստիարակությունը XXդ. վերջին և XXIդ. սկզբին.

Հայ ժողովուրդը դեռևս հնագույն ժամանակներից ունեցել է երաժշտությամբ զբաղվելու ամուր ավանդույթներ, երբ երաժշտությունն ընկալվում էր որպես անձի գեղագիտական զարգացման հզոր միջոց: Հայ մտածողներից շատերն իրենց ուսումնասիրություններում շեշտում էին երաժշտության դերը մարդու հոգեկան աշխարհի և մտածելակերպի զարգացման գործում կապելով այն քերականության, խոսքի, բնագիտության և այլ արվեստների հետ: Բարձրորակ երաժշտական կրթություն էին առաջարկում երաժշտական ուսումնական հաստատությունները, բազմաթիվ էին արվեստի դպրոցները, երաժշտական խմբակներն ու երգչախմբերը, որոնք գործում էին յուրաքանչյուր հանրակրթական դպրոցում: Այս ամենին զուգահեռ անխուսափելի էին դառնում նաև խնդիրները.Ժամանակակից մանկավարժության համար խնդիր էր սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատ: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ: Երաժշտական ծրագրի հիմքում ստեղծագործաբար պահպանվել են Դ. Կաբալևսկու ծրագրի հիմնական սկզբունքերը՝ թեմատիկ կառուցվածքը.

- Երեխայի մեջ ձևավորել ճիշտ երգելու ունակություններ, հմտություններ որոնք և կնպաստեն երգի արտահայտիչ կատարմանը,
- օգնել երեխային կատարել երգերը ուսուցչի օգնությամբ և ինքնուրույն, նվագակցությամբ և ակապելլա,
- զարգացնել երաժշտական լսողությունը, սովորեցնել տարբերել և զգալ -ճիշտ և սխալ երգեցողությունը,

- զարգացնել երեխայի ձայնը՝ ձևավորելով բնական, մակական հնչողություն, ամրապնդել ձայնածավալը,
- օգնել ստեղծագործական ունակությունների բացահայտմանը, ծանոթ երգերի ինքնուրույն կատարմանը:

Երաժշտությունը որպես ուսումնական առարկա . կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ-անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր դաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Հանրակրթական դպրոցում երաժշտության դասավանդումը դրվում է նոր պահանջների, նոր խնդիրների լուծման հիմքի վրա, ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախ տեսնում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների արժեքային որակների, կամքի, բնավորության զգացմունքների հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Դպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային և հոգևոր երաժշտության միջոցավ: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով : Ժողովրդական երգերը, հեքիաթները, ավանդազրույցները, առած-ասացվածքները մեծ պաշար են դպրոցականների երաժշտական մշակույթի ձևավորման ու զարգացման համար: Հարկավոր է հաշվի առնել, թե ինչպես է մատուցվում այսօր երաժշտությունը ոչ մասնագիտացված, հանրակրթական դպրոցներում, ինչպիսի մասնագիտական դրույթներ ու չափանիշներ են ծառայում: Ավելին ինչ նյութ է մատուցվում երաժշտական ուսուցում- դաստիարակության ընթացքը ապահովելու համար: Երաժշտական դաստիարակության, ուսուցման մատչելիության, հասանելիությունն ապահովելու համար Հայաստանում ազգային երաժշտության հիմքով կիրառվում են մի շարք մեթոդներ, դիդակտիկ միջոցներ, որոնք երկարատև փորձության մեջ իրենց արդարացրել են և համամարդկային նշանակություն ստացել: 2005թ. Հայաստանը միանալով Բոլոնյան գործընթացին, հե-

տնողական կերպով փորձում է իրականացնել իր կրթական ծրագրերի համապատասխանեցման գործընթացը: Այս համակարգի նախաձեռնությամբ միջնակարգ կրթությունը դարձավ 12-ամյա և եթե երաժշտությունը դպրոցում անցնում էին մինչև 4-րդ դասարան, ապա ընդունվեց որոշում որով երաժշտական կրթությունը դպրոցներում արդեն սկսեցին ուսումնասիրել 2-7-րդ դասարաններում: 1-ին դասարանում՝ 2 ժամ, տարրական կրթությունը դարձավ քառամյա: Այսպիսի ուսուցումը դարձավ անհրաժեշտ արվեստի առարկաների համար: Հայաստանը ստանձնեց որոշակի պարտավորություն այն է.ըստ գործողությունների առանձին ուղղությունների՝ պետք է մինչև 2010թ. Ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումը և մաս դառնալ կազմակերպվող Եվրոպական բարձրագույն կրթությանը: Բոլոնիայի գործընթացը տասը հիմնարար դրույթների ամբողջություն է: Այդ դրույթներն են՝ դյուրընթեռնելի և համեմատելի աստիճանների (որակավորումների)և 3 հիմնական աստիճանների վրա հիմնված համակարգի ընդունում, կրեդիտների համակարգի ներդրում, աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական կազմի շարժունությանը, որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցության խրախուսում, բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանում, շարունակական կրթության կարևորում, աջակցություն եվրոպական բարձրագույն կրթական տարածքի գրավչության բարձրացմանը, դոկտորական ծրագրի ներդրում:

2.2 Բարեփոխումներ XXI դ. հայ դպրոցում ՝ երաժշտական կրթության և դաստիարակության բնագավառում

Համաշխարհային հանրության զարգացման տեմպերի արագացումը, հետարդյունաբերական հասարակությունից անցումը տեղեկատվական հասարակության և հետևաբար՝ 21-րդ դարասկզբին յուրաքանչյուր երկրի կրթական ոլորտի նշանակալիության գիտակցումը հանգեցնում են հայկական կրթական համակարգի ակտիվ բարեփոխումների անհրաժեշտության գիտակցման, որն ուղղված է որակյալ կրթության հասանելիությանը և կրթական հաստատությունների գործունեության արդյունավետությանը: Ժամանակակից հանրակրթության հրատապ խնդիրներից է՝ սովորողներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում: Անհերքելի է երաժշտության ուսումնա-

սիրման գործընթացում հայրենասիրական երգերի, ազգային- ազատագրական ու ժողովրդական երգերի պատառիկների ուսուցման նշանակությունը և կարևորությունը: Հանրակրթական դպրոցում «Երաժշտություն» առարկան ունի իր ուրույն տեղը: Դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Առանց երաժշտություն առարկայի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը: Երեխաների երաժշտական զարգացումը, դաստիարակությունը խիստ կապի մեջ են նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ: Երաժշտության ուսուցչից պահանջվում է դասավանդման որակը բարձրացնել, հասցնել արվեստի մակարդակի: Նա պետք է ստեղծագործական մոտեցում ունենա դասի նկատմամբ, կարողանա ճկուն կերպով կողմնորոշվելով ընտրել մանկավարժական այն հնարները, որոնք առավել նպատակահարմար է օգտագործել տվյալ իրավիճակում: Մեծ նշանակություն ունի նյութի ճիշտ ընտրությունը և դասարան առ դասարան ծրագրերի կազմումը: Ընտրված նյութը պետք է լինի գեղարվեստորեն բարձրարժեք, հետաքրքիր, մանկավարժական որոշակի նպատակաուղղվածությամբ, համապատասխանի աշակերտի տարիքային հոգեբանական և անհատական առանձնահատկություններին, հետաքրքրություններին, կատարողական հնարավորություններին: Առարկայի նպատակը դպրոցականների հոգևոր և բարոյական դաստիարակությունն՝ երաժշտական մշակույթին ծանոթանալու գործընթացում՝ որպես անհատականության ներդաշնակ ձևավորման կարևոր բաղադրիչ: Առաջադրանքներ.

- նպաստել դպրոցականների ունկնդրի մշակույթի ձևավորմանը ՝ երաժշտական արվեստի գագաթնակետին նվաճումներին ծանոթանալու հիման վրա,
- սովորեցնել գտնել փոխազդեցություն երաժշտության և գեղարվեստական գործունեության այլ տեսակների միջև նոր ձեռք բերված գիտելիքների հիման վրա,
- դպրոցականներին սովորեցնել երաժշտությունն ընկալել որպես յուրաքանչյուր մարդու կյանքի անբաժանելի մաս,
- ստեղծագործական ինքնաարտահայտման միջոցով զարգացնել հետաքրքրությունը երաժշտության նկատմամբ, որն արտահայտվում է երաժշտության, սեփական ստեղծագործության մասին մտորումների մեջ,

- դաստիարակել երաժշտական երևույթների հուզական արձագանքը, երաժշտական փորձառությունների անհրաժեշտությունը,
- ձևավորել գիտելիքների համակարգ, որն ուղղված է երաժշտական-պատմական ոճերի բնութագրման առանձնահատկությունների իմաստալից ընդհանրացված ըմբռնմանը, երաժշտական ամենակարևոր ժանրերի և ձևերի իմացությանը, արտահայտման միջոցներին, երաժշտական արվեստում բովանդակության և ձևի խորը փոխհարաբերությունների գիտակցմանը:

1-4-րդ դասարաններում աշակերտները լսում և երգում են բազմաբնույթ և բազմատեսակ ստեղծագործություններ,դրանք երգեր են, պարերը, քայլերերգերը, երաժշտական խաղերը, որոնք երեխաները լսում են, երգում, քայլում, պարում ու խաղում: Որոնց շնորհիվ կուտակում են բազմապիսի երաժշտական տպավորություններ, երաժշտապես զարգանում, ձեռք բերում երաժշտություն ունկնդրելու և կատարելու փորձ: Ծանոթանում են, թե ինչպես են երգը, պարը քայլերգը հնչում նվագարաններով և դառնում երգային, պարային և քայլերգային բնույթի ստեղծագործություններ: Առարկայի ներկայիս երգացանկում ընդգրկված հայրենասիրական երգերի նշանակությունը որոշելուց առաջ նախ պետք է կանգ առնել հենց հայրենասիրության հասկացության վրա, որը Հայաստանում ամենաարդիական թեմաներից մեկն է: Դաստիարակչական մեծ ներուժով են օժտված հայրենիքի, զինվորի մասին քայլերգերը, ռազմի երգերը: Այս տեսանկյունից արժեքավոր են կրթական տարբեր աստիճաններում «Երաժշտություն» առարկայի դասընթացում որպես ուսումնական նյութ ներառված քայլերգերը (Մ. Մազմանյան «Քայլերգ», Պյոտր Չայկովսկի «Փայտե զինվորների» քայլերգ, «Ուղիղ կարգով», հայրենասիրական երգեր՝ «Կովկասի քաջեր», «Ջան հայրենիք» Առնո Բաբաջանյանի «Մեր սիրելի Երևան» և այլն): 5-7-րդ դասարաններում աշակերտները ծանոթանում են արվեստների ընտանիքին /երաժշտություն, գրականություն, պարարվեստ, կերպարվեստ, թատրոն և կինոարվեստ/, որպես մարդու հոգևոր զարգացման հույզերի և զգացումների արտահայտման, աշխարհի ճանաչման հզոր միջոցներ: Աշակերտները իմանում են, որ առանց գրականության, պոեզիայի հնարավոր չէ ստեղծել երգ, օպերա, բալետ, կանտատ և այլն: Նրանք գիտակցում են նաև, որ երաժշտությունը իր հերթին օգնում է գրականությանը, պոեզիային, և ուժեղացնում դրանց ներգործությունը մարդու վրա: Այդ իսկ պատճառով եթե չլիներ երաժշտու-

թյունը՝ աղքատ կլիներ նաև գրականությունը, պոեզիան: Ծանոթանում են պարարվեստին, կերպարվեստին, իմանում, որ կա ոչ միայն ներքին լսողություն, որով մարդիկ լսում են չհնչող երաժշտությունը, այլև կա ներքին տեսողություն, որի միջոցով կարող են մարդիկ տեսնել այդ պահին չցուցադրվող նկար:Նրանք իմանում են նաև, որ երաժշտությունը թատրոնում և կինոյում ունի կարևոր նշանակություն:

7-րդ դասարանում աշակերտների երաժշտական մտահորիզոնն ավելի է ընդլայնվում, ստանում են ավելի խորը գիտելիքներ նաև հայ հոգևոր երաժշտության մասին: Սովորում են, որ այն ծագել և զարգացել է միջնադարում և, որ տվյալ ժամանակաշրջանում ապրել և իրենց ծառայությունն են թողել հատկապես Մ. Մաշտոցը, Գ. Նարեկացին, Ն. Շնորհալին: Հոգևոր երաժշտության մշակման և կատարելագործման մեջ մեծ ավանդ ունեն Մ. Եկմալյանը և Կոմիտասը: Սովորողները ծանոթանում են նաև դասական, ջազային, և հանրամատչելի երաժշտության հասկացություններին: Նպատակն է երաժշտության այդ երեք տեսակների համադրման միջոցով նրանց մեջ զարգացնել կյանքում հնչող բազմատեսակ ու խայտաբղետ երաժշտության մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողությունը: Ուսուցիչը պետք է մշտապես կիրառի արդյունավետ միջոցներ՝ աշակերտների հետաքրքրվածության մակարդակը բարձրացնելու կամ, գոնե չնվազեցնելու համար,հակառակ դեպքում չի կարողանա ապահովել դասարանում սովորող աշակերտների գիտելիքների համապատասխանությունը չափորոշչային ստանդարտներին: Կրթակարգով կարևորվում է սովորողի ոչ միայն գիտելիքների այլև կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորումը, ուստի ուսուցիչը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ: մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստան ուսումնական ծրագրերը պետք է նպաստեն, որ ուսումնառության արդյունքում մանկավարժը տիրապետի.

1. Իր աշխատանքը ծրագրելու կարողությանը. այդ թվում՝

- ուսումնական գործընթացն արդյունավետ ծրագրելու, առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու,
- ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու

2. Ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կարողությանը,այդ թվում՝

- անհատականացված ուսուցում իրականացնելու,
- Սովորողի տարիքայի և հոգեբանական առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժառիթներն ու վարքագիծը հաշվի առնելու,
- կրթության բովանդակության յուրացումն ապահովող ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ ներդնելու,
- ուսուցման համար բարենպաստ սոցիալ հոգեբանական միջավայր ստեղծելու:

3. Գնահատման կարողությանը՝ դիտարկելով գնահատումը որպես սովորողի խրախուսման և նրա շարունակական զարգացումն ապահովող միջոց: Այսօր ուսուցիչը կրթության ոլորտում կանգնած է բազմաթիվ մարտահրավերների առաջ: Կրթական անվերջանալի թվացող բարեփոխումները, ծրագրային փոփոխությունները, ժամանակակից աշակերտի մտածելակերպն ու պահանջները և շատ այլ գործոններ նրան ստիպում են վերանայել ձեռքի տակ եղած մեթոդները, աշխատառճը, գիտելիքները, այլապես ձախողումն անխուսափելի է:

Հայաստանի կրթական համակարգի բարեփոխումները առաջ են քաշում կրթության որակի նոր չափորոշիչներ: Դպրոցի շրջանավարտը պետք է ձեռք բերի համալիր գիտելիքներ, որպեսզի մրցունակ լինի աշխատուժի շուկայում, տիրապետի բարձր կրեատիվ մտածելակերպի՝ ստեղծագործաբար մոտենալով հիմնախնդիրների լուծմանը. Ճիշտ և քննադատաբար գնահատելով թե շրջապատող իրականությունը, թե տրամադրվող տեղեկատվությունը:

2.3 Հայ դպրոցի երաժշտական դաստիարակության լավագույն ավանդույթների կիառումը ուսուցման գործընթացում

Հայ ժողովրդի կրթական համակարգը հազարամյակների պատմություն ունի: Այն հարուստ է բազմաբնույթ կրթօջախների գործունեությամբ, իրենց գործին նվիրված մանկավարժների աշխատանքային սխրանքներով:

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում ունի իր առանձնահատկությունները, որով և տարբերվում է մյուս առարկաներից: Դպրոցում երաժշտության դասավանդման արդյունավետության համար նշանակալի է միջառարկայական կապերի ստեղծումը, օրինակ՝ գրականության նկարչության, պատմության հետ: Այսպես Կոմիտասի երաժշտաարվեստին երեխաներին հաղորդակից դարձնելով՝ կարելի է իրականացնել ազգային երգ ու պարի դաստիարակչական գործառույթներ: Ներկայումս ժամանակակից դպրոցում դաստիարակչական գործունեություն իրականացնելիս յուրաքանչյուր մանկավարժ պետք է հնարավորություն ընձեռնի երեխային ինքնուրույն մտածել: Դպրոցում երաժշտության առարկայի դասագրքերում զետեղված են տարբեր ժանրերի ՝ հերոսական, էպիկական, քնարական, պարային,ինչպես նաև՝ տարբեր թեմաներով երգեր. Հայրենասիրական, հոգևոր, ազգային, ժողովրդական, օրորոցային և այլն: Տրված է հարուստ փաստական նյութ կոմպոզիտորների, երաժիշտների, կատարողների, մանկավարժների մասին: Երաժշտության դասագրքերում ուսուցանվող երգերին կցվում է հավելյալ տեղեկություն՝ արվեստագետների ու մշակույթի գործիչների նյութերով ու լուսանկարներով: Երաժշտության գործնական դասավանդման և կատարման համար դպրոցական դասագրքերը ներառում են նոտաներ ու բառեր, օգտագործվում են հայ և այլազգի նկարիչների նկարների վերատպություններ: Ժամանակի ընթացքում հայացքները, կարծիքները, արժեքները փոփոխվում են և յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, որոնք ունեն իրենց արժեքային կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները, սակայն մեր խնդիրը նրանում է, թե որքան արդյունավետ կարող ենք այդ ժառանգությունը կիրառելի դարձնել ազգային դպրոցներում: Երաժշտության դպրոցական դասընթացը իր մեջ ամփոփում է աշակերտների երաժշտական գործունեության հետևյալ տեսակները. Երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա, նվագ մանկական նվագարաններով: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր բովանդակությունը, նպատակը, խնդիրները և իրականացման եղանակները:

Նախնական ծրագրով դասը սկսելուց առաջ կազմվում է դասի պլան, որով և առաջնորդվում է ուսուցիչը: Աշխատանքն առավել արդյունավետ է դառնում, երբ երաժշտության դասավանդումը ուղեկցվում է կոմպոզիտորների, երաժիշտների, կատարողների մասին տեսազննական նյութերով, իսկ դասագրքերում տեքստերն ուղեկցվում են իրենց նոտաներով, որը շատ է կարևորվում գործնական աշխատանքների համար: Դպրոցական երաժշտական դասաժամերի մեջ հարկավոր է անդրադարձ կատարել հայ ժողովրդական ավանդույթներին՝ որպես մշակույթի հիմնական միջոց, որը ոչ միայն ուսուցողական է, այլև դաստիարակչական:Մասնավորապես ժող. Երգերը, ավանդազրույցները, հեքիաթները, հոգևոր երգերը հանդիսանում են սովորողների դաստիարակության հարուստ նյութի աղբյուր: Խոսելով հայ երաժշտական մշակույթի մասին՝ մենք միշտ տալիս ենք Կոմիտասի անունը, իբրև ամեն բանի նախասկիզբ: Եվ դա իսկապես այդպես է Կոմիտասը հայ դասական մասնագիտացված երաժշտության հիմնադիրն է: Մանկավարժական գործունեության առաջին քայլերից Կոմիտասը մեծ եռանդով աշխատել է բարելավել երաժշտության դասավանդումը և այդ նպատակով կազմում է երաժշտության նոր ծրագրեր ՝ ըստ առանձին դասարանների, կազմակերպում քառաձայն երգչախումբ: Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ֆոնդում պահպանված Կոմիտասի կազմած եկեղեցական երգեցողության առաջին ծրագրերը վերաբերում են 1894/1895 ուսումնական տարվա Գ և Դ դասարաններին: Երրորդ դասարանի ծրագիրն ընդգրկում է հետևյալ բաժինները՝ 1. Հայոց արդի ձայնանիշների գյուտը, 2. Ձայն, 3.տևողություն, 4.ընդհարումներ, երաժշտական զանազան նշաններ, 5. Ձայնական երաժշտություն, 6. Ձայնի հարաբերական չափ, 7. Ութ բուն ձայնեղանակներից ԱՁ, ԲՁ,ԲԿ: Վերջում նշված է, որ դասերի ընթացքում երգել են շարականներից օրինակներ և վարժություններ: Չորրորդ դասարանի ծրագիրն ունի հետևյալ բաժինները՝ 1. ձայնական երաժշտություն, 2. ձայնական երաժշտության ձևերը, 3. Երաժշտական եղանակ, 4. ձայների հարաբերական չափ, 5. Ութ բուն ձայնեղանակներ, 6. Դարձվածքներ: Այստեղ ևս նշված է գործնական պարապմունքների բնույթը՝ երգել բուն ձայներին և դարձվածքներին վերաբերող շարականներ, կատարել ութ ձայների և նրանց դարձվածքների ելևէջների տեղափոխություն ու փոխանցում: Շարականները երգվել են ըստ միջնադարյան հայ երաժշտության ութ ձայնեղանակների: Կոմիտասը իր ծրագրերով ու գործունեությամբ ճեմարանում հաստատեց երաժշտական դաս-

տիարակության նոր, առաջավոր և կատարելագործված համակարգ, որի նպատակն էր երաժշտությունը կապել կյանքի հետ, օգնել աշակերտներին հասկանալ ու սիրել երաժշտությունը, զարգացնել լադային, տեմբրային լսողությունը, ռիթմի զգացողությունը, երաժշտական մտածողությունը, հիշողությունը, կատարողական ունակությունները, ստեղծագործական երևակայությունը, սովորել բազմաձայն երգեցողություն թափանցել հայ հոգևոր և աշխարհիկ երաժշտության ակունքները, նվագել ժողովրդական ու դասական նվագարաններ, ձայնագրել ժող. Երգեր, ծանոթանալ արևմտաեվրոպական, ռուսական, արևելյան երաժշտություններին: Կոմիտասն այս ամենին զուգահեռ կարևորում էր բարոյական դաստիարակության դերը: Նա մարդու բարոյական հատկանիշները գերադասում էր մասնագիտական գիտելիքներից և իր սաներին սովորեցնում լինել հայրենասեր, բարի, ազնիվ, ճշմարտախոս, ընկերասեր, հոգատար, ունենալ պարտքի պատասխանատվության, արժանապատվության բարձր զգացումներ: Նրա երազանքն էր Էջմիածնում երաժշտանոց հիմնել, որտեղ կպատրաստվեին երաժշտական մշակույթի տարբեր բագավառների մասնագետներ, նաև երաժիշտ-մանկավարժներ դպրոցների համար: Նա անձնվիրաբար պայքարում էր հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության անաղարտության, հայի՝ ինքնուրույնի երաժշտություն ունենալն ապացուցելու համար: Նա իրավացիորեն գտնում էր՝ «որքան ապրի հայկական երաժշտությունը, այնքան կապրի Հայաստանը: Երաժշտության դասի ընթացքում՝ դպրոցական դասագրքերում տրամադրվում է Կոմիտաս վարդապետի երգարվեստի վերաբերյալ ուսումնական նյութը: Աշակերտներին դասի ընթացքին նախատրամադրելու և դասանյութի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու նպատակով ուսուցիչը հանդես է գալիս ներածական խոսքով: Որից հետո մտագրոհի միջոցով օրորոցային երգի ու Կոմիտասի վերաբերյալ երեխաների նախնական գիտելիքների վերհանումը: Այստեղ ցուցադրվում է Կոմիտաս վարդապետի դիմանկարն և հակիրճ ներկայացվում նրա կյանքն ու գործը: Կոմպոզիտորը ժող. Երգերի իր մշակումներով , դրանց կազմավորման գործընթացի համար մեծ դերով նպաստեց հայկական երաժշտական ազգային դպրոցին նոր երաժշտական գեղագիտական մարմնացում տալուն: Վարդապետի մասին կարելի է ասել, որ գրվել է հնարավոր ամեն ինչ, ամբողջությամբ ուսումնասիրվել է ն նրա թողած հոգևոր-մշակութային ժառանգությունը: Նա եղել և շարունակում է մնալ Հայաստան աշխարհի մշակութային

խորհրդանիշն, հայ երգարվեստի, ժող և հոգևոր երաժշտության փրկիչը, համակարգողն ու տեսաբանը: Իր ստեղծագործական ոչ երկարատև կյանքի ընթացքում նա բազմակողմանի ու արդյունավետ գործունեություն ծավալելով մեծապես կանխորոշեց հայ երաժշտական արվեստի զարգացման հետագա ուղին: Նա աճող սերունդների համար հայ երաժշտությունը քոչվոր ցեղերի բացասական ազդեցությունից մաքրելուց բացի հայ երգն ու պարը քարոզել, տարածել է որպես ինքնաճանաչման և էթնոդաստիարակության մեթոդ: Կոմիտաս հունարեն թարգմանությամբ նշանակում է «մտահոգ, հոգատար», այդպիսին էր ուզում տեսնել նա նաև հայ ուսուցչին ինքը՝ Կոմիտասը, ով լավագույն մարդասեր ուսուցչի իր տեսլականի կերտման ճանապարհին ձևավորեց ու մեզ ժառանգեց իր մանկավարժական հայացքներն ու սկզբունքները, գաղափարական, գեղարվեստական հայացքները, որոնք այսօր էլ ունեն արդիական ու կարևոր նշանակություն: Նրա մանկավարժական հայացքները կրթական համակարգում եղած խնդիրների, նպատաների, վերջնարդյունքների իրականացման ճանապարհին կարող են դառնալ յուրաքանչյուր ուսուցչի բանալին. Ինչ նպատակ ունի Կոմիտասի դասավանդումը դպրոցում , այն է՝

- Դաստիարակել հոգևոր և բարոյական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր,
- Ուղղորել սովորողներին լսել ճիշտ երաժշտություն,
- Ձևավորել և զարգացնել երաժշտության գիտակ, ազգային ավանդույթների կրող, պահպանող ու սերունդներին փոխանցող սովորող,
- Ընդլայնել սովորողների երաժշտական և ընդհանուր մտահորիզոնը՝ շարունակել դաստիարակել երաժշտական ճաշակ, զարգացնել կայուն հետաքրքրություն այլ ժողովուրդների դասական և ժամանակակից երաժշտության հանդեպ, արժևորել մշակութային բազմազանությունը,
- Դաստիարակել հատուկ վերաբերմունք և հետաքրքրություն մշակութային օջախների գործունեության նկատմամբ, դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք. Երաժշտությունը ունկնդրելու մշակույթ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը արվեստի տեսակ է, որի բովանդակությունը ամփոփված է հնչյունային գեղարվեստական կերպարում: Այն մեր կյանքում շատ մեծ տեղ է զբաղեցնում: Առարկայի նպատակն է դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ: Դպրոցական դաստիարակության նպատակն է ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել նրա ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական և այլ իրավիճակներում: Երկրի զարգացման շարժիչ ուժը երիտասարդ սերունդն է. և շատ կարևոր է 21-րդ դարի սովորողի կրթությունն իրականացնելիս ճիշտ ընտրել այն որակները, որոնք կնպաստեն կրթությունը հաջողությամբ իրականացնելու համար: Ինչպես վաղ անցյալում, այնպես էլ այսօր, անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել մշակութային ոլորտի զարգացման հարցերը՝ կառուցելով երաժշտական նոր դպրոցներ և մշակութային օջախներ, և որ ամենակարևորն է պատրաստել սերունդներ կրթող այնպիսի ուսուցիչներ, ում նպատակը կհանդիսանա անել հնարավորինս գրագետ ու զարգացած սերունդ կրթելու և դաստիարակելու համար: Դպրոցի խնդիրը պետք է կայանա գեղարվեստական համակարգի նորացումը: Առաջնային խնդիրը դարձնելով ժողովրդական երգի պահպանումն ու մշակումը: Այսօր առավել ևս քան երբևէ մեծ նշանակություն ունի նաև ազգային մշակույթի պահպանման գործը: Ինչի համար մեր սուրբ պարտականությունն է այն մատաղ սերնդին մատուցելը: Հիմնական խնդիրներից է նաև դպրոցներում դասավանդող մանկավարժների վերապատրաստումը ու պատրաստումը: Դպրոցների գործունեության հիմնական խոչընդոտներից է նաև երաժշտական գործիքների պակասը, ինչը հնարավորություն չի տալիս առավել արդյունավետ կազմակերպել ուսման գործընթացը ու պահպանել դասավանդման անհրաժեշտ որակը: Եվ քանի որ, երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար, ապա դպրոցի խնդիրը պետք է դառնա գեղարվեստական համակարգի նորացումը, ինչպես նաև ժող. Երգի պահպանումն ու մշակումը:

Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է ոչ միայն երեխայի աշխարհայացքի ձևավորմանը, այլև կարողությունների, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Բացի այդ, երեխային անպայման պետք է ծանոթացնել ժող. Երաժշտությանը, որպեսզի նա հասկանա իր ժշողովրդի մշակույթը: Ավելին, ժողովրդական և հոգևոր երգերը պատմական գիտելիքների և իմաստության իրական գանձեր են: Իսկ Կոմիտասի երգերի կատարումը կզարգացնի երեխային մեծացնելու ֆիզիկական և մտավոր զարգացվածությունը, կբարձրացնի նրա բնականոն աճն ապահովելու գործընթացը:

Կոմիտասյան երգերի կատարումը դաստիարակում է երեխաների մեջ հայ լինելու հպարտությունը, որը ճիշտ մատուցելու դեպքում կապահովի նաև ոչ միայն իմանալու այլ պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու այդ արժեք: Իբրև այդպիսիք՝ Կոմիտաս վարդապետի հավաքչական ու գիտական աշխատանքը, թողած ժառանգությունը պետք է օգտագործել մատաղ սերնդին հայեցի դաստիարակելու համար: Մեծն կոմպոզիտորի դիտարկումները կարող են լինել ուղենիշ և դառնալ կրթության ու դպրոցի զարգացման արդյունավետ ուղիների մշակման բանալին: Ժամանակակից կյանքում առավել քան երբևէ, ակնհայտ են դարձել երաժշտության տեղն ու դերը մշակութային հանրային ոլորտներում, այն ինքնության կերտման հզոր գործիք է և մշակույթի կարևոր բաղադրիչ: Երաժշտության ուսուցումը երեխաներին սվորեցնում է բազմամշակութայնությունը, ներկայացնում տարբեր ազգերի ու խմբերի երաժշտական արժեքները, ճանաչել տալիս սեփական անձը և հայացքները, ինչպես նաև օտարների մոտեցումներ: Երաժշտության ուսուցումն ընդլայնում է երաժշտական ոլորտի արժեքները՝ ներառելով համամարդկային արժեքներ: Երաժշտատեսական գիտելիքները հարկավոր է մատուցել այն տեսքով, որը հեշտ ու հասկանալի կլինի տվյալ տարիքի սովորողի համար: Հենց սկզբից պետք չէ, սովորողին ծանրաբեռնել տերմիններով ու անուններով որոնք ոչ միայն խճճում են նրա հիշողությունը այլև վանում դրանք իմանալու ցանկությունը: Դրանք հարկավոր է մատուցել նախ՝ խաղի միջոցով գործնական կատարմամաբ սկզբից, ուշադրությունը բևեռելով ապա՝ որո-

շակի հստակ պարզելով սովորողի դրանց երաժշտական նշանակությունը անվանումը գրի առնելու և այլն:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ երաժշտության ուսուցումը, սովորելը, ունկնդրելը և օգտագործելը այն միջոցներն են, որոնք կնպաստեն երաժշտության տարածման և նրա ինքնության պահպանման գործին: Մենք ապրում ենք արագ փոփոխվող աշխարհում, որտեղ տեղի են ունենում սոցիալ-մծակութային սրընթաց զարգացումներ և կերպարանափոխումներ, որոնք հանգեցնում են ազգերի մշակութային նկարագրի փոփոխմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Ռ.Ա., Մակար Եկմալյան, Կյանքը (Ծննդյան 125 ամյակի առթիվ), Երևան, «Պատմաբանասիրական հանդես», 1981, N 1, էջ 26-45:
2. Աթայան Ա., Ներսես Շնորհալին հայ մանկագրության ակունքներում: Մեսրոպ Մաշտոց համալսարանի Երևան 2019, էջ 152-157:
3. Ասատրյան Ա. Կոմիտասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ուղիները Երևան, «Պատմաբանասիրական հանդես», 2010, N 1, էջ 25-42:
4. Բալյան Ա. Գևորգյան ճեմարան (Ըստ Ս. Վրացյանի հուշագրության), Աստվածաբանության ֆակուլտետ «Տարեգիրք», Երևան, 2014:
5. Թահմիզյան Ն., «Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը», «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1964, N 7, էջ 161-209:
6. Բարխուդարյան Վ. Կրթությունը միջնադարյան Հայաստանում X-XIV դդ., Երևան, 2013:
7. Բարսեղյան Պ. Նորից Մեծն Կոմիտասի մասին, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2021:
8. Զաքարյան Հ. Աստրախանի հայոց գաղթօջախի մշակութային կյանքից «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1980, N 12, էջ 121-128:
9. Մազմանյան Մ. Ս. Երաժշտության դասավանդման մեթոդիկա Երևան 1994:
10. Պողոսյան Ս. Գրիգոր Նարեկացի, Հավատարմատ, Երևան, 2015:
11. Մկրտումյան Լ.Ա., Հայոց պատմություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016:
12. Дрозд К. В Актуальные вопросы педагогики и образования. Учебник и практикум для академического бакалавриата, М., «Юрайт», 2017. 361 с.
13. Тагмизян Н., Теория музыки в Армении, Ереван, «изд-во АН Арм. ССР», 1977, 320 с.